

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՎԻԵՆՆԱՅԻ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ
ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ս.թ. հունիսի 1-ին, Վիեննայի Ս. Հռիփսիմե եկեղեցում, Ս. Պատարագի ընթացքում, ձեռամբ Կենտրոնական Եվրոպայի և Սկանդինավիայի Հայրապետական Պատվիրակ Գերշ. Ս. Մեսրոպ արք. Գրիգորյանի կատարվեց սարկավագական ձեռնադրություն: Վիեննայում երկար տարիներ բնակվող և Ս. Հռիփսիմե եկեղեցում իր նվիրյալ ծառայությունը բերած Հայրապետ Շարբաթյանը ձեռնադրվեց սարկավագ:

Սրբազան Հայրը շնորհավորեց բոլոր ներկաներին և իր պատգամն ու հորդորը ուղղեց նորընծա սարկավագին՝ Աստուծոց ստացած շնորհներով էլ ավելի շենացնելու և պայծառացնելու Հայ Եկեղեցին:

Սա երկրորդ դեպքն է, որ Ավստրիայի Հայ Առաքելական Եկեղեցական համայնքում սարկավագ է ձեռնադրվում: Ձեռնադրության արարողությանը մասնակցում էին Ավստրիայի հայ համայնքի Հոգևոր հովիվ Արժ. Ս. Անդրեաս քին. Իսախանյանը և Հոգշ. Ս. Տիրան արք. Պետրոսյանը:

###